Հավելված N 21
Արդարադատության նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 1195-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջազգային իրավական համագործակցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 12-32.5-Ղ4-3):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր իրավաբաններից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. կազմակերպում է միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, փոփոխման հետ կապված աշխատանքները.

2. կազմակերպում է միջազգային պայմանագրերի նախագծման, ստորագրված բազմակողմ միջազգային պայմանագրերում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխության կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև միջազգային պայմանագրերը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության պատրաստման և տրամադրման աշխատանքները.

3. կազմակերպում է վարկային կամ դրամաշնորհային միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելու համար ներպետական ընթացակարգերի կատարումը հավաստող իրավաբանական եզրակացության տրամադրման

աշխատանքները.

4. կազմակերպում է ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ միջազգային կազմակերպությունների անդամակցությունից բխող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշումների, կարծիքների և պահանջվող այլ տեղեկատվության ներկայացման աշխատանքները, ինչպես նաև ԵԱՏՄ և երրորդ կողմի պետությունների հետ ազատ առևտրի շրջանակներում պայմանագրերի նախագծերի, ԵԱՏՄ իրավունքի մաս կազմող միջազգային փաստաթղթերի վերաբերյալ դիրքորոշումների կազմման աշխատանքները.

5. կազմակերպում է ԵԱՏՄ դատարանում Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու և իրավական դիրքորոշումներ դատարան ներկայացնելու աշխատանքները.

6. կազմակերպում է միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, գերատեսչությունների կողմից ստացված՝ Նախարարության իրավասությանն առնչվող հարցաշարերի լրացման և պահանջվող տեղեկատվության մշակման և տրամադրման աշխատանքները:

Իրավունքները՝

- Նախարարության իրավասությանը վերապահված աշխատանքների ղեկավարման, նպատակով այլ գերատեսչություններից՝ օրենքով իրենց վերապահված գործունեության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ դիրքորոշման պահանջում.
- Ֆինանսների, Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարություններից, որպես իրավասու և շահագրգիռ մարմին, միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական և գույքային պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության վերաբերյալ եզրակացությունների պահանջում.
- Ֆինանսների և Արտաքին գործերի նախարարություններից, որպես իրավասու և շահագրգիռ մարմին, վարկային և դրամաշնորհային միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելու համար Նախարարի իրավաբանական եզրակացության տրամադրման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթերի պահանջում.
- Միջազգային պայմանագրի կնքման, բազմակողմ միջազգային պայմանագրին միանալու նպատակով որպես իրավասու մարմին այլ շահագրգիռ մարմիններից և Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից օրենքով իրենց վերապահված գործունեության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ դիրքորոշման պահանջում.

- Նախարարության թարգմանությունների կենտրոնից միջազգային պայմանագրի նախագծերի ներպետական ընթացակարգի անցկացման փուլում պայմանագրերի տեքստերի պաշտոնական թարգմանությունների պահանջում.
- ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունից միջազգային պայմանագրերում ներառված անձնական տվյալների փոխանակում, տրամադրում նախատեսող դրույթների ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ կարծիքների տրամադրման պահանջում.
- ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ միջազգային կազմակերպությունների անդամակցությունից բխող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշումների, կարծիքների և պահանջվող այլ տեղեկատվության պահանջում.
- ԵԱՏՄ և երրորդ կողմի պետությունների հետ ազատ առևտրի շրջանակներում պայմանագրերի նախագծերի, ԵԱՏՄ իրավունքի մաս կազմող միջազգային փաստաթղթերի վերաբերալ դիրքորոշումների կազմման աշխատանքների համակարգման նպատակով իրավասու և շահագրգիռ գերատեսչություններից, ինչպես նաև Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից լրացուցիչ փաստաթղթերի պահանջում.
- ԵԱՏՄ դատարանում Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու և իրավական դիրքորոշումներ դատարան ներկայացնելու աշխատանքների կազմակերպման նպատակով այլ գերատեսչություններից, ինչպես նաև Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից տեղեկատվության պահանջում.
- Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և գերատեսչությունների կողմից ստացված՝ Նախարարության իրավասությանն առնչվող հարցաշարերի լրացման և այլ տեղեկատվության մշակման համար Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկատվության պահանջում:

Պարտականությունները՝

- Ստացված տեղեկատվության ամփոփում, Նախարությանը վերապահված գործառույթների սահմանված ժամկետներում իրականացում.
- Իրավասու մարմնին միջազգային պայմանագրի նախագծի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում.
- Միջազգային պայմանագրում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև միջազգային պայմանագիրը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության մասին Նախարարության եզրակացության տրամադրում.

- «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով Նախարարությանը վերապահված միջազգային պայմանագրի նախագծի կամ բազմակողմ միջազգային պայմանագրի՝ իրենց վերապահված գործունեության ոլորտին առնչվող հարցերի մասին որպես շահագրգիռ մարմին եզրակացության տրամադրում.
- Միջազգային պայմանագրերի ստորագրման, վավերացման, հաստատման նպատակահարմարության մասին եզրակացությունների տրամադրում.
- Միջազգային պայմանագրի լրամշակված նախագծի հայերեն և օտար լեզվով տեքստերը և շահագրգիռ գերատեսչություններից ստացված առաջարկությունների ամփոփաթերթը, որպես իրավասու մարմին ՀՀ արտաքին գործերի նախարարություն փոխհամաձայնեցման ներկայացում.
- Միջազգային պայմանագրերի վերաբերյալ վերապահում, հայտարարություն, այդ պայմանագիրն արդեն իսկ ստորագրած մյուս կողմի վերապահման հայտարարության դեմ առարկության նախագծի տրամադրման կամ դրանց վերաբերյալ համաձայնությունների նախագծերի տրամադրում.
- Միջազգային պայմանագրի ստորագրման իրավական հետևանքների և պայմանագրում Հայաստանի Հանրապետության միջազգային իրավազորության և ինքնիշխան իրավունքների իրականացման սահմանափակումներ նախատեսող դրույթների առկայության մասին իրավասու մարմնին եզրակացության տրամադրում.
- Վարկային և դրամաշնորհային միջազգային պայմանագրի կնքման և ուժի մեջ մտնելու համար դրանով նախատեսված ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարումը հավաստող Նախարարի իրավաբանական եզրակացության կազմում.
- ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ միջազգային կազմակերպությունների անդամակցությունից բխող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշումների, կարծիքների և պահանջվող այլ տեղեկատվության ապահովում.
- ԵԱՏՄ և երրորդ կողմի պետությունների հետ ազատ առևտրի շրջանակներում պայմանագրերի նախագծերի, ԵԱՏՄ իրավունքի մաս կազմող միջազգային փաստաթղթերի վերաբերալ դիրքորոշումների կազմման աշխատանքների կազմակերպման նպատակով այլ գերատեսչություններից, ինչպես նաև Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված տեղեկատվության վերլուծություն, ամփոփում և ներկայացում.
- ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ մարմինների ՀՀ կողմից անդամակցած այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում կազմակերպվելիք տեսակոնֆերանսների, խորհրդակցությունների, բանակցությունների մասնակցության ապահովում.
- ԵԱՏՄ դատարանում Հայաստանի Հանրապետության անունից հանդես

գալու և իրավական դիրքորոշումներ, ինչպես նաև Դատարանի կողմից պահանջվող հարցումների պատասխանների դատարան ներկայացնելու աշխատանքների կազմակերպման նպատակով ստացված տեղեկատվության վերլուծություն, ամփոփում և ներկայացում դատարան.

- ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ մարմինների ՀՀ կողմից անդամակցած այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում կազմակերպվելիք Նախարարության իրավասության ոլորտին առնչվող տեսակոնֆերանսներին, խորհրդակցություններին այլ գերատեսչությունների և Նախարարության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցության ապահովում.
- Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, գերատեսչությունների կողմից ստացված՝ Նախարարության իրավասությանն առնչվող հարցաշարերի լրացման նպատակով համապատասխան օրենսդրության ուսումնասիրություն, վերլուծում, ամփոփում ու դրա արդյունքներով պատասխանների և այլ անհրաժեշտ տեղեկատվության ապահովում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
2	Ոլորտ	Գործարարություն և վարչարարություն
3	Ենթոլորտ	Իրավունք
4	**Մասնագիտություն**	**042101.00.6 Իրավագիտություն**

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում

4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում
7. Փոփոխությունների կառավարում

4. Կազմակերպական շրջանակը

4.1.Աշխատանքի կազմակերպական և ղեկավարման շրջանակը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2.Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3.Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5.Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: